

Աղբիւրի յաւելուած

լոյս է տեսնում ձաթաթը մի անգամ կիրակի օրերը

№ 16 կիրակի 4 մայիսի | ութերորդ տարի 1897

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՈՒՄ Է ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Աղբիւր-Տարազի *պրեմիաներն են՝* 1) Միխայէլ Նալբանդեանի *վերջին լուսանկարից պատրաստուած մեծաղիր ֆոտտո-դրաւիւր պատկերը,* 2) *Մայրիկի ննջարանում, մի շքեղ նկարազարդ,* 3) *Ոսկէ շղթաներում, կամ Հարեմի աղջիկը,* 4) *Իւրաքանչիւր ամիս Պարիզի մոդաներ, բացատրութիւններով:*

ԱՂԲԻՒՐԻ տարեկան գինը 3 ր. (տարատաւնական 4 ր. *կամ* 12 ֆր.), ՏԱՐԱԶԻՆԸ 6 ր. (տարատաւնական 10 ր. *կամ* 30 ֆր.), ամսական *Տարազը* 50 կ. *Աղբիւրը*—25 կ. *պրեմիաները տանում է Աղբիւր-Տարազ միեւնոյն հասցեով գրող բաժանորդը, վճարելով եւ մէկ ռուբլի:*
Հասցէն՝ Тифлисъ, редакція иллюст. жур. Агбюръ-Таразъ *կամ* Tiflis (Caucase) Réd. des jour. Agbur et Taraz.

Ճանապարհ Թաւագում—Պանջա գետի ափին.

ԼԷՄԱՆ *)

VII

Ներքիր, ներքիր, սէրած անգին,
Եթէ այս քաղցր օրերին
Մի յիշատակ մութ, տխրագին
Սուգ է բերում մեր սէրին։
Գիտցիր տողերս քեղնով են լի.
Քեզնից են և քեզ համար
Մտքիս աւիւն, տենչ սիրալի,
Անուրջ, երազ գուրգուրալի,
Յաւ ու ժրպիտ և քընար։
Ներքիր սակայն, եթէ երբեմն
Մի յիշատակ տխրամած
Ձիրմից ելնում է կեանքի բեմն,
Ըրձանանում է իմ դիմաց։
Կան մտքեր, որ ներկայ են միշտ,
Յիշատակներ կան, աւազ,
Ուր թաղած է անցեալի վիշտ,
Որոնք կենդան են մընում միշտ
Եւ անմոռաց՝ մինչ դադար։
Դա՝ բանկոյլի ուրւականն է,
Դա՝ մօր արցունքն է վերջին,
Մանկան ժրպիտն առաջին,
Դա՝ անցեալի գրաւականն է—
Սէրն էլ անշունչ էակի,
Մոխիր մարած կըրակի...
Վաղ հասակս է ներկայանում.
Գայթակղութեամբ դիւթիչ լի
Մի պատկեր է կենդանանում,
Մարած կեանքիս ծալքեր բանում,
Մի կեանք անյոյս, տխրալի։
Եւ անցեալով եմ ես կրկին
Ապրում, սիրում, տառապում,
Ճնշւում է իմ կուրծքը, հոգին.
Թէ ծանրը է, թէ հեշտագին
Ինձ այդ զարթնած տագնապում։
Յուզիչ ժամին այդ ցընորքի
Յանկարծ ձայնդ եմ լսում,
Հոսանքն անուշ քո մեղմ խօսքի,
Որ կամացուկ ինձ ասում—
Թող անշնչին՝ անշունչը,
Հըսկի՛ր սիրոյս շըշունջը։
Բայց երազը եղեմական,
Ձընաշխարհիկ ըզգացում,
Որ սրտիս մէջ մի տրտմական
Սիրոյդ հըմայքով թափանցում,
Եւ հրապոյրը քո կուսական,
Որ ջերմ սէրս է թախանձում.—
Հոգուս յուզումը չեն մեղմում,
Եւ պատկերըն այն կորած,
Որի տեսքն է կուրծքըս սեղմում,
Աչքիս դէմ է՝ անմոռաց։
Օ, որքան նա, որ էլ չըկայ,
Գիտէը տանջել սիրելով,
Գիտէը ըզգալ, լինել վըկայ
Իր մահացման, բերելով
Ինքն իրան զոհ՝ անխըռով...
Մինչդեռ ա՛յժմ... մոխիր է նա,
Թառամել է ծաղիկն անբախտ...
Աւա՛զ, բոլորն կանհետանայ,
Թէկուզ կեանքը լինի ղըրախտ...
Եւ այս ժամին տես, հըրեշտակ,
Դու լալիս ես, լինչպէս ես,
Անցեալ վէպիս դառն յիշատակ
Խլուտ ծանր է ինձ և թէ քեզ,
Բայց և ցաւում ենք մենք նըրան,
Գաղջը է երբեմն այն յիշել,
Թէկուզ լանք իսկ նըրա վըրան,
Թէկուզ նա կեանքս է մաշել....
Ա՜հ, ո՛չ, բախտի տէրը մե՛նք չենք,
Որ ապրում ենք այժմ ահա,
Տանջւում, սիրում ու լալիս ենք,
Այլ երջանիկ է լոկ նա։
Խաղաղ շիրմին արեգական
Ճառագայթն է վառ ժպտում,
Գիշերն տիրում է լուսընկան,
Թռչնակն երգում ու վխտում,
Մինչ գեփիւռը հառաչելով,
Տապանաքարը պաչելով,
Օրօրում է շիրմի վրայ
Յաւերժական քունը նրա։

VIII

Բարձունքներում ձիւնէ թագը
Հրդեհւում է վերջալոյսի այս ժամին,
Հազիւ շնչում է քամին.
Ծածուկ հովտում մեղմ հնչում է դետակը,
Մանո՛ւկ՝ սնաած սառոյէ ոտինքով սարերի՝
Կրծքին հպւում է կիսաքուն ափերի։
Չեռուն ջրվէժն, ասես զարկով պողպատեայ,
Զարնում ժայռին դրանիտեայ,
Մինչդեռ մօտիկ մէկ անկիւնից հազիւ-հազ
Հասնում է չինչ առւի կարկաչը նըւազ.

*) Տես Տարազ № 15.

Արծաթաձայն շատրւան՝
Խաղում է նա թմրութեան մէջ իրիկւան։
Սոճիների անտառի մեղմ շրշունջը
Կարծես լինի դետում թաքուն լողացող
Ջրահարսների մրմունջը՝
Մերթ ղւարթուն, մերթ լացող։

Եւ Լէմանը... Փուած հրպարտ
Գեղեցկութեամբ՝ վերջալոյսի շողերից
Եւ ծլփերի դողերից
Նրա մոյգ-կանաչ երեսի վրայ ջինջ, հանդարտ՝
Սրփուած է բազմազունի մէկ ըղձուտ
Նորահարս է ասես չքնաղ ու համեստ։
Ձուրջ համակել է մի խորհուրդ անպատում,
Կայ չերմութիւն մեղմ օդում։
Ահա կամաց ըսկսաւ երկինքը մարել
Եւ հրմայուած աչքի հանդէպը շարել
Ձղթան կապոյտ լեռները,
Որ գրկել են գօտին լըճի ափերի։
Պայծառ աստղը փայլեց երկնի երեսին,
Մօտ սարերից թեթև խաղաց նուրբ զեփիւռ
Եւ ամաչկոտ նարկէսին
Բոյրը փըչեց համասփիւռ։
Օ՜, մօտեցիր, նազելիս.
Թող ես լըսեմ սրտիդ քնքուշ զարկերը,
Պիտեմ քո վառ աչքերը,
Չնչէ մրմունջդ՝ ականջիս սէր խօսելիս։
Առանց ձայնիդ, առանց սրտիդ բաբախման
Ներդաշնակ չեն հնչիւնները բընութեան...
Ժամ բնկրկանքի, ժամ քաղցրալի հլայման
Եւ մեր Հոգու միութեան։
Օ, եկ ինձ մօտ...Տես, շուրջ որքա՜ն է գլխիկ,
Սէրն է ասում իր մեղեդին կախարդիչ։
Թողնենք քամին հառաչէ,
Թողնենք անդեալն լայ, քընանայ ու հանգչէ.
Մի տաճար է բընութիւնը շրջակայ,
Որտեղ օլհնում է ջերմ կապը մեր սէրի
Կեանքի համար ապագայ,
Նոյնպէս մահի... Օ՜, արի՜...

IX

Սփոփանք տրիտուր իմ օրերի,
Սիրոյս քաղցրը հրրեշտակ,
Ես կարդում եմ քո աչքերի
Մէջ սէրըդ ջերմ ու յստակ։
Ըղդացմանըդ վրճիտ ցօղը
Նրանց մէջ փայլում է յուսով,
Մինչ Լէմանի յուզման դողը
Անդրադառնում է նաղով։

Որպէս ամեն բան ստանում է
Կեանք ու եռանդ քո հոգում.
Անուրջն ինձ բախտ խոստանում է
Քեղնից՝ կեանքի փոթորկում։
Մըթնշաղը խորհրդաւոր
Քօղ է սփռել երեսիդ,
Մինչդեռ երազը բախտաւոր
Ջարկում է սիրտը կոյսիդ։
Ի՜նչ հրմայիչ երջանկութիւն
Քեզ հետ՝ կեանքի խոր ցաւում.
Ի՜նչ թովչական մէկ արթնութիւն
Յափրշտակիչ դրրաւում
Մոռացման մէջ սիրոյդ դիւթիչ
Եւ նրա նիրհումը կախարդիչ։
Որպէս պաշտած մի սրբութեան՝
Մօտենում եմ քո սրտին.
Ժա՜մ անոդոք մի հեշտութեան,
Որ հմայում է իմ հոգին։
Ահ, պաշարիր իմ էութիւնս,
Օ, ցա՜ւ սիրոյ մէկ անպատում.
Քո երազում այս արթնութիւնս
Այնքան քաղցր է, այնքան տրտում։
Օ, տա՛ր թեւիդ վրայ անարգել
Ինձ աշխարհը սքանչացման.
Ձքնաղ կուռքըս թող խնկարկել,
Տրւել խանդիս մոռացման։
Քանի՜ անգամ խոր ցաւերում
Իմ անցեալի՝ ես մենակ
Կարօտել եմ երազներում
Սիրոյ ժամին այս անյագ։
Ձղում եմ, քաղցրը իմ անուրջը
Գըտաւ շընորհք կախարդիչ
Այս վայրերում, որ իմ շուրջը
Սիրոյս ջերմոցն է դիւթիչ...
Օ՜, եկ, սիրած, ինձ ձեռքըդ տուր,
Այդ ձեռքըդ նուրբ ու անգին...
Ա՜հ, ոառւսուր տուրբ ու մաքուր
Պաշարել է քո անձին։
Այստեղ ղդայումը քո անուշ
Հրմայքներով է կապել,
Այստեղ արեանդ ոյժը քնքուշ
Նոր եռանդով է վառւել.
Այստեղ ձայնդ քո հնչում է
Սիրակարօտ մրմունջով,
Այստեղ կուրծքըդ քո շնչում է
Լիութեան քաղցը անուրջով։
Ի՜նչ անբսպառ երանութիւն
Այս զարդի մէջ բնութեան.

Ձուրջ բուրում է մի թարմութիւն,
Ծարաւ տալիս բերկրութեան
Եւ Լէմանի կոհակները
Մրմնջում են ձայնիդ հետ...
Ինչո՞ւ խիստ են տըրտիները
Սրտիդ քնքոյշ, սիրաւէտ.
Ինչո՞ւ սիրտս էլ ճմըլւում է,
Մարմինս ամբողջ սարսռւում է.
Արթնութիւն է սա, թէ երազ.
Կեանքի աղբիւր է յստակ.
Ի՞նչ կախարդանք անցաւ վերաս...
Օ՜, անուրջիս հրեշտակ...

Ա. Հ.

(Վերջը միւս անգամ)

ԹԷՈԴՈՐԱ.

Պատմական վէպ Ի. Ֆիօրենտինիի

(Շարունակութիւն *)

XXX

ԲԵԼԻԶԱՐԻՈՍԸ ԵՒ ՆԱՐՋԻՏԸ

Վիտիզ թագաւորը տիրելով Հռոմին, ուզեւորւեց Տոսկանայի ճանապարհով, նւաճելով ճանապարհին գտնւած բոլոր քաղաքները: Այն ինչ Միլանը և ամբողջ վերին Իտալիան ապստամբւեցան գօթացոց դէմ, ցանկանալով օգտւել Յուստինիան կայսեր հովանաւորութիւնից: Վիտիզը չըվախեցաւ.նա բանակցութիւններ սկսեց ֆրանկների հետ, նրանցից տաս հազար հոգի գօթ ոտացաւ ամրանալու համար և վճռեց շարունակել կռիւը: Միանալով իր Ուրայա եղբօրորդու հետ, նա նւաճեց Միլանը: Մի և նոյն ժամանակ նա նւաճեց և Բիմինին, որի կառավարիչը կայսերական գօրքերի կապիտան Ջիովաննին էր: Փեներալ Բելիզարիոսը շտապեց Հռոմից վերջին օգնութիւնը հասցնել: Հռոմից Բիմինի ուշանալու ժամանակ Բելիզարիոսը լսեցաւ որ Պիչէնում կայսերական գօրքերի նոր բանակ է աւելացել Նարզէտի՝ կայսերական նեքինիի հրամանատարութեան ներքոյ, որին սիրում էր Յուստինիան կայսրը և նրա Թէոդորա ամուսինը: Ըընայելով ուշացքին տրամադրւածները դէպի Անտոնինան, բիւզանդական կայսրուհին հաւատ չէր ընծայում Բելիզարիոսին, որի յաղթութիւնները Իտալիայում բարձրացնում էին նրա անունը:

Ուստի երբ Յուստինիանը յայտարարեց, որ աւելորդ չէր լինի հետամուտ լինել Բելիզարիոսին, Թէոդորան դէմ չէր նրան,որ Նարզէտը ուղարկւի Իտալիա, որպէս օգնական գօրքի հրամանատար, բայց իսկապէս Բելիզարիոսի մատնութեան համար: Նարզէտին տւել էին երկու հրահանգ—ակնյայտնի և գաղտնի: Առաջինում հրամայւում էր լինել ժեներալ Բելիզարիոսի հրամանատարութեան տակ՝ իբրև նրա օգնական: Երկրորդը հրամայում էր հետամուտ լինել ժեներալ Բելիզարիոսին այնպէս, որ ժեներալը կարծի որ պաշտօնական պարտականութիւնների եռանդուն կատարող է: Վերջին յանձնարարութիւնը կամայականութեան լայն ասպարէզ էր տալիս յիշեալ մատնիչին:Նարզէտը խորամանկ Թէոդորայի արժանաւոր յաւաջ քաշած մարդկանցից էր: Փոքր հասակից պաստիարակւած լինելով բիւզանդական ապարանքի խարդախութիւններով, Նարզէտը աչքի էր ընկնում իբրև հմուտ մատնիչ: Նախ և առաջ նա մտածեց ոչնչացնել Բելիզարիոսի փառքը և ճանապարհ բանալ նրա պաշտօնը ձեռք բերելու համար: Առաջին տւած հարցն էր. արդեօք նախ նւաճել Օգիմոն թէ օգնութեան հասնել Բիմինիին: Բելիզարիոսը այն կարծիքի էր,որ ապահովեցնէ Օգիմոն նւաճելով: Նարզէտը ընդհակառակը պնդում էր՝ նախ և առաջ օգնութեան ձեռք կարկառել Բիմինիի պերեալներին: Նարզէտի կարծիքը յաղթեց: Ջօրքը դիմեց դէպի Բիմինի. գօթացիք յետ մղւեցին և ապա նւաճւեցան: Այս յաղթանակը վերագրւեցաւ Նարզէտի պատերազմական ընդունակութիւններին. երբ գօրքերը մտնում էին Բիմինի, կապիտան Ջիովաննին, դառնալով Նարզէտին, ասաց.

—Մենք ձեզ և միմիայն ձեզ ենք պարտական մեր վերկութեամբ:

Բելիզարիոսը այս խօսքերից յետոյ ոչինչ չասաց, բայց հասկացաւ, որ Նարզէտը այդ օրից նրա վտանգաւոր հակառակորդը պիտի լինի: Նրա կռակածները շուտով արդարացան: Ջինւորական մի խորհրդում Բելիզարիոսը յայտնեց այն միտքը, որ չի կարելի կորցնել յարմար րոպէն. պէտք է յարձակւել միացած ոյժերով գօթացոց վրայ և ջարդել նրանց մաս-մաս: Նարզէտը, ցանկանալով բաժանել Բելիզարիոսից և անկախ լինել, վճռում էր այդ կարծիքի վրայ, առաջարկելով բաժանւել. մէկը գնար դէպի Էմիլիօ, միւսը Բաէննա: Բելիզարիոսը հասկացաւ նենքինիի միտքը և ի հարկէ պնդեց իւր կարծիքի վրայ: Այն ժամանակ Նարզէտը ի լուր ամենքսին յայտնեց, որ ժեներալ Բելիզարիոսը կայսերական ճառայութեան յառաջադիմելու ընդդէմ է, և հէնց այն օրն իսկ ուղարկեց Կոստանդնուպոլիս ամբաստանութիւն ժեներալ Բելիզարիոսի մասին, իսկ հետևեալ գիշերը, օգտւելով նրանից որ ժեներալ Բելիզարիոսը զբաղւած էր Ուրբինոյի նւաճումով, Նարզէտը բաժանեցաւ նրանից, դիմելով իր զօրքով դէպի Էմիլիօ: Բելիզարիոսը, չընայելով իր կարզադրութեան տակ գտնւած անհուշան ոյժերին, չըվհատւեց: Նւաճեց Ուրբինոն, Օրվիետոն և գիմեց դէպի Միլան: Գժբախտաբար. բիւզանդական գլխաւոր հրամանատարը այս արշաւանքը անյաջող էր: Զարմանալ նւաճումով ճարպատեղութեան հասցրած Միլանը վերջապէս ստիպւած էր յաղթւելու: Թշնամին քաղաքը կրակի և սրի կերակուր դարձրեց և Բելիզարիոսը տեսաւ միայն ծխող աւերակները:

*) Տես Տարազ № 15.

Այն ինչ Յուստինեան կայսրը, յայտարարութիւն ստանալով Նարղէտից, մտածութեան մէջ ընկաւ: Թեներալ Բելիզարիոսի դաւաճանութիւնը պալատական խարդախների մխիթարն երևակայութիւնն էր, իսկ ժեներալի արած ծառայութիւնները Աֆրիկայում և Իտալիայում, նոյնպէս և Կոստանդնուպոլսում՝ անիշխանութեան օրերում՝ կատարած և անվիճելի փաստեր են: Ներքինիի աւելորդ մնալը բանակում ակնյայտնի է, որ կարող էր տխուր հետևանքներ ունենալ կայսերական գէնքի համար Իտալիայում: Ի նկատի ունենալով այս տեսակ ենթադրութիւնները, Յուստինեան կայսրը հրաման ուղարկեց Նարղէտին անյապաղ գալ Կոստանդնուպոլիս: Այսպիսով ժեներալը մնաց դարձեալ մենակ, զօրքերի բոլորովին անկախ գլխաւոր հրամանատար Իտալիայում: Մի շարք փառաւոր յաղթութիւններով Բելիզարիոսը կարողացաւ ստիպել սիրելու իրան ոչ միայն իր նաճած քաղաքների բնակիչց, այլ և զօրացոյց: Բելիզարիոսին մի քանի անգամ առաջարկում էին իտալական թագաւորի տիտղոսը, բայց ժեներալը հաւատարիմ մնալով իր պարտաւորութեանը, միշտ մերժում էր:

Նարղէտի Կոստանդնուպոլիս գալը ի հարկէ չէր կարող անհետևանք մնալ իտալական գլխաւոր հրամանատարի համար: Պալատական խարդախները ձայները էին տարածում, որ ժեներալ Բելիզարիոսը դիտաւորութիւն ունի դաւաճանելու բիւզանդացոց կայսրին, ընդունել իտալական թագաւորի տիտղոսը և բաժանուել Բիւզանդիոնից: Կայսրը, որ թէպէտև բնութիւնից չափազանց կասկածոտ էր, այնքան էլ չէր հաւատում այդ ձայներին, բայց թէոդորան դրանց ուրիշ տեսակ վերաբերուեց: Այն միտքը թէ Անտոնինան կարող է կանգնել իր հետ մի բարձրութեան վրայ, և կարելի է դեռ նրա իշխանութեան վրայ աչք ունենայ, նեմեսացրեց փառասէր կնոջ մտաւոր ընդունակութիւնները. նա սկսեց պնդել, որ Բելիզարիոսը անյապաղ կանչուի Կոստանդնուպոլիս:—Յուստինեան կայսրը, որ կնոջ ցանկութիւնները խանարհաբար կատարում էր, այս անգամ էլ այնպէս արաւ, ինչպէս նա էր ցանկանում. Բելիզարիոսի անյապաղ Կոստանդնուպոլիս գալու հրամանը ուղարկուեցաւ: Եւ չընայելով, որ ժեներալի ներկայութիւնը Իտալիայում շատ անհրաժեշտ էր իր սկսած պատերազմը վերջացնելու համար, Բելիզարիոսը խոնարհուեց: Յանձնելով զօրքերի կառավարութիւնը ուրիշին, նա ուղևորուեց Կոստանդնուպոլիս:

Կ. Մարտիրոսեանց

(Կրճատուածկի)

* * *

Յո՛ւրտ է, տխուր, երկինք ծածկւած ամպերով,
Առաւօտից դանդաղ անձրեւ է մաղում,
Առաւօտից երկար փչում է ցուրտ հով,
Պատել է շուրջ սեւ տրտմութեան քօղն անհուն:

—

Ու ծառերի անդուլ շշունջ մելամաղձ
Ունայնութեան յիշեցնում է սեւ մտքեր,
Մինչ խուլ սրտիս մէջ չքանում են անդարձ
Պայծառ օրեայ վերջին ճաճանչ եւ ձայներ:

—

Կեանքն է այս, որ կմախքի պէս անկայուն
Մերկ ու դատարկ, իջնում է սեւ գերեզման,
Ցուրտ ու տխուր նա իմ սիրտն է փաթաթում
Իր ոսկրացած բազուկներով անկենդան...

Լոնդոն

Եր. Պալեան

ՅՈՒՆԱՍՏԱՆ ԵՒ ԿՐԻՏԷ

(Պատմական տեսութիւն)

VI

Չէնց որ այդ բոլորի մասին տեղեկութիւն ստացւեց Բէրլինում, Վիլհելմ կայսրը իսկոյն խորհրդակցեց իր կանցլերի—Հոհենլոյէի հետ և ապա անձամբ այցելեց ռուսաց, ֆրանսիացոց և անգլիացոց դեսպանատները... Հետևեալ օրը մի համախորհուրդ կազմւեց, որտեղ կայսրը առաջարկեց ամենախիստ միջոցներ ձեռք առնել Յունաստանի դէմ: Այդ առաջարկութիւնը շուտով յայտնի եղաւ մեծ պետութիւններին և դրանցից իւրաքանչիւրն իր կարծիքն յայտնեց, բայց այդ ամենը չէր վախեցնում փոքրիկ Յունաստանին. նա շարունակում էր իր եռանդուն գործունէութիւնը, զօրքերը հաւաքում էր տաճկական սահմանի վրայ և պատերազմի պատրաստութիւններ տեսնում... Նոյնը անում էր նաև Տաճկաստանը, բազմաթիւ զօրքեր ուղարկելով Թեսսալիա և Կրէտէ: Յունական նաւերը արդելում էին տաճկ. զօրքին Կրէտէ իջնել... Ձընայելով այդ բոլորին՝ սուլթանը համարձակ քայլ չէր անում և սպասում էր իր հզօր պաշտպանների—Ռուսաստանի և Գերմանիայի անելիքներին: Սկզբում Ֆ. Դուրը բաւականացաւ Կ. Պոլսի դեսպաններին հետևեալ յայտագիրն յանձնելով.

—«Խաղաղ ժամանակ յոյները իրանց «Miaulis» նաւից կրակ բաց անելով տաճկ. «Fuad» նաւի վրայ, խախտեցին միջազգային օրէնքը, ուստի սուլթանը իրաւունք ունի կտրել իր քաղաքական յարաբերութիւնները Յունաստանի հետ և մինչև անգամ պատերազմ հրատարակել... Բայց որովհետև Եւրոպան իր վրայ է վերցրել Կրէտէն խաղաղեցնելու գործը, այդ պատճառով Ֆ. Դուրը իր պարտքն է համարում նախապէս համաձայնել դեսպանների հետ և նրանցից խելացի խորհուրդներ լսել... Եթէ Յունաստանը շարունակէ իր սպառնական ընթացքը, այն ժամանակ Տաճկաստանը ստիպւած կլինի դիմել ամենախիստ միջոցների»...

Գլուխ Գլուխովի

մ ա յ ի ս

Վերջապէս Եւրոպական պետութիւնները իրանց նաւերով շրջապատեցին Կրէտէն։ Ծովապետները իտալացի սպաներ ուղարկեցին, որպէս զի դրանք բանակցեն Վասոսի հետ և համոզեն վերջինիս կղզուց հեռանալ...

Սակայն Վասոսը բացէ ի բաց մերժեց այդ առաջարկութիւնը, հիմնւելով իր սուրբ հրահանգների վրայ։ Իսկ այդ հրահանգների մէջ ի միջի այլոց ասւած էր.

—«Որտեղ յարմար կըհամարէք, այնտեղ տեղաւորեցէք զօրքը, դրաւեցէք ամբողջ կղզին. դուրս արտաքսեցէք տաճիկ զինուորներին... Ձեր ամեն մի քայլի համար պատասխանատու է Գէորգ Թագաւորը և ամբողջ Յունաստանը... Ահա այդպիսի լիազօրութիւնից դրդւած Վասոսը շարունակում էր իր համարձակ ընթացքը և անուշադիր էր թողնում միջազգային նաւատորմիղի պահանջները։ Դրօշները հետզհետէ բարդւում էին...

Նոյն իսկ հեռաւոր տեղերում ապրող յոյները ոգևորւել էին և Յունաստան էին ուղարկում մեծ քանակութեամբ կամաւորներ և փող։ Բացի անհատական նւէրներից՝ յոյն հարուստները մի ակցիոներական ընկերութիւն կազմեցին իրանց հայրենիքին օգնելու համար։

Յայտնի յոյն բարեգործ Եւերովը միանգամից նւիրեց իր հարստութեան կէսը—50 միլիոն դրախմ, իսկ միւս կէսն էլ կտակեց դարձեալ Յունաստանին։ Անգլիայում, Իտալիայում և Ֆրանսիայում հասարակական կարծիքը յոյների կողմն էր։ Գենւայում հելլենասէրները զանազան ցոյցեր էին անում և բացականչում էին՝ «pereat» Տաճկաստանի և Եւրոպական քաղաքականութեան վրայ։ Նոյն իսկ օտարերկրացի կամաւորներ էին գալիս Յունաստան։ Հազմաթիւ իտալացիներ միացել էին ապստամբների հետ... Անմահ հերոս Գարիբալդիի որդին յայտնել էր Յունական կառավարութեանը, որ պատերազմի դէպքում յոյներին օգնութեան կըհասնեն 100,000 Գարիբալդիականներ...

«Հայրենեաց ընկերութիւնն էլ եռանդուն կերպով գործում էր Անգլիայում... Նա միտինգներ էր կազմում և հանգանակութիւն անում... Մեծ մարդասէրը—Ճերունի Գլադստոնն էլ իր ձայնը բարձրացրեց։ Նա «Հայրենեաց ընկերութեանը» մի նամակ գրեց, որի մէջ ի միջի այլոց ասում էր.

—«Տաճիկ կառավարութեան յամառութիւնն այնքան ակնյայտնի և անտանելի է, որ ես մեծ հրճւանք կըզգայի եթէ նա բոլորովին ոչնչանար և իր հետ ընդ միշտ ոչընչացնէր այն բոլոր գազանութիւնները, որոնց ենթակայ են թշւառ հպատակները... Ցաւալին այն է, որ ներկայումս յոյները և սլաւոնները զբաղւում են ներքին հաշիւներով և երկպառակութիւններով... Մի՞թէ աւելի լաւ չէր լինիլ, որ բալկանեան բոլոր պետութիւնները միանային և ընդհանուր ոյժերով կռւէին գազանասիրտ Տաճկաստանի հետ և պաշտպանէին իրանց իրաւունքները»...

Քաղաքակիրթ ազգերի բուռն համակրութիւնը (դէպի յոյները) աւելի դժւարացնում էր հարցի լուծումը։ Եւրոպական պետութիւնները չըգիտէին արդեօք իրանց հպատակների ձայնին լսեն, թէ դարձեալ Տաճկաստանի statu quo պահպանելու քաղաքականութեանը հետևեն։

Բայց «New-lork-Herald» լրագրի ասելով, Գորդեան հանգոյցը սպասածից աւելի շուտ քանդւեց, երբ Ռուսաստանը իր վճռական ձայնը բարձրացրեց և Կրէտէն ռմբակոծել առաջարկեց։

Ռուսաստանի հետ իսկոյն միացան Գերմանիան և Աւստրիան։ Անգլիան, Ֆրանսիան և Իտալիան հասարակական կարծիքի տակ ճնշւած՝ դեռ տատանւում էին... Բայց վերջի վերջոյ դրանք էլ միացան, որպէս զի «Եւրոպայի խաղաղութիւնը չըխանգարւի»։

Պետութիւնների որոշումը շուտով իրագործւեց. այսինքն միջազգային նաւատորմիղը ռմբակոծեց Կրէտէն... Սակայն այդ միջոցն էլ չըվախեցրեց ոչ քաջասիրտ ապըստամբներին և ոչ էլ փոքրիկ Յունաստանին։ Ապստամբները երդւել էին թափել վերջին կաթիլ արիւնը և ձեռք բերել ցանկալի ազատութիւնը։ Յունաստանն էլ որոշել էր անպաշտպան չըթողնել իր նահատակող զաւակին և անպատճառ Կրէտէն միացնել իր հետ։ Վերջապէս Եւրոպական պետութիւնները յայտարարեցին, որ Կրէտէին կըտրւի ընդարձակ ինքնավարութիւն. բայց հարցը դրանով էլ չըվերջացաւ... Յոյների պահանջն էր «Յունաստանի և Կրէտէի միացումը»։ Երբ Աթէնքի ռուսաց ներկայացուցիչը Գէորգ Թագաւորին խորհուրդ տւեց հնազանդւել պետութիւնների պահանջին և կղզուց չետ կանչել յունական զօրքը, նա պատասխանեց—«Այդ անհնարին է... ես իմ ամբողջ ժողովրդի ցանկութեան հակառակ չեմ գնալ»... Եւ իրրև մի նոր ապացոյց այդ խօսքերի՝ մարտի 15-ին Թագաժառանգն էլ գնաց Թեսսալիա յունական զօրքի մօտ, իսկ պատգամաւորների ժողովում Դելիանիսը յայտնեց, որ յունական կառավարութիւնը երբէք մտադիր չէ իր ներկայ ընթացքից չետ կանգնելու։ Այդ խօսքերը ծափահարութիւններով ընդունւեցին և ընդարձակ դահլիճում նորից լսւեցին.

—«Կեցցէ Կրէտէ, կեցցէ Յունաստան, կեցցէ Թագաւորը»... Յոյների օրինակելի անձնազոհութիւնը և յամառութիւնը մեծ անհանգստութիւն էր պատճառում Եւրոպացին։

Վերջապէս Գերմանիան առաջարկեց բոլոր յունական նաւահանգիստներն էլ ռմբակոծել։ Այդ առաջարկութեանը հաւանութիւն տւին բոլոր պետութիւնները, բացի Անգլիայից, որը յայտնեց թէ այդ միջոցը բոլորովին անտեղի և աննպատակայարմար է։ Ըընայելով մեծամասնութեան համաձայնութեանը՝ նաւահանգիստների ռմբակոծելը մինչև օրս տեղի չի ունեցել, թերևս այն պատճառով որ պետութիւնները համոզւեցին, թէ այդ միջոցն էլ ապարդիւն պիտի անցնի։

Մարտի 25-ին Յունաստանը մեծ շքեղութեամբ տօնում էր իր ազատութեան տարեդարձը... Աթէնքում ժողովուրդը հաւաքւել էր արքունիքի մօտ և աղաղակում էր.

—Պատերազմ, պատերազմ Տաճկաստանի դէմ... Կեցցէ պատերազմը։

Ձատերը կարծում էին, թէ այդ օրը անպատճառ պատերազմ կըհրատարակւի, բայց այդ կարծիքն էլ չիրականացաւ։

Այժմ գործերի խառը դրութիւնը դեռ շարունակւում է. Կրէտէի մի մասը ապստամբների ձեռքումն է, իսկ մի մասին էլ տիրել են եւրոպացիները։

Այդ խառնիճաղանճ դրութիւնը աւելի բարդւեց, երբ ապրիլ ամսի 6-ին յունաց կանոնաւոր զօրքը անցաւ

սահմանը և ոտք դրեց տաճկաց հողի վրայ... Վերջապէս պաշտօնական կերպով հրատարակուեց պատերազմը, որ և շարունակւում է մինչև օրս, մեծ անհանգստութիւն պատճառելով «մեծախօս դիպլօմատներին» և բռնակալ սուլթանի բարեկամ միապետներին. թէ պատերազմող կողմերից որը կըտանի վերջնական յաղթանակը, այդ ցոյց կըտայ մօտիկ ապագան։ Յամենայն դէպս եթէ յոյները յաղթուեն, նրանց այդ հերոսական քայլը ընդմիշտ անմոռաց կըմնայ և մի գեղեցիկ տեղ կըգրաւէ ապագայ պատմութեան էջերում։

Ե. Թումչեան

ԿԵՆՑԱՂԱՓՏՈՒԹԻՒՆ

II

ԼԵԶՒԻ ՄԱՔՐՈՒԹԻՒՆԸ

Եթէ ցանկանում ենք մեր խօսակցութեամբ ախորժելի տպաւորութիւն թողնել, մեր լեզուն պէտք է մաքուր լինի։

Զարմացած ընթերցողը կըհարցնէ.—Մաքուր, բայց ի՞նչ բանից»։

Առաջինը՝ տեղական բոլոր ձևակերպութիւններից։ Գիտենալով տեղական բարբառը, կողմնակի մարդկանց հետ խօսակցութիւն ունեցած ժամանակ չըպէտք է գործ ածել նրա կազմութեան մէջ մտնող բառեր, նամանաւանդ ընտիր հասարակութեան մէջ, ուր այդ բանը կըլինէր անտեղի, ինչպէս սալոնում խալաթով երևալը, թէև այդ գեղեցիկ, յատակ լինէր և շատ էլ սազ գար մեզ։

Առհասարակ պէտք է ընտելանալ խօսքերը քերականօրէն ուղիղ արտասանելու և մանրակրկիտ լինելուց փախչելով հանդերձ՝ չըպէտք է ընկնել ռամկական կամ թէ չափազանց խիստ արտայայտութիւնների ետևից, կարծելով, որ դրանից մեր խօսքը աւելի օրինակելի և ազդու կըդառնայ։

Ձշմարիտ բարեկըրթ մարդիկ իրանց մայրենի լեզուի մէջ չեն խառնում նոյնպէս և օտարազգի բառեր։ Սրանով մենք չենք ուզում ասել, որ հարկաւոր է, նոյն իսկ անհրաժեշտ, խոյս տալ նաև օտարազգի այնպիսի խօսքերից, որպիսիք արդէն մուտք են գործել մեր լեզուի կազմութեան մէջ. օրինակ՝ իդէալ, էլեկտրականութիւն, և այլն։ Փոխարինել նրանց հայկական որևիցէ համապատասխանող բառերով,—դա առնւազն, թերու ազգասիրութիւն կըլինի։ Նամանաւանդ չըպէտք է գործ ածել օտարազգի այնպիսի բառեր, որոնց կազմութիւնն ու արտասանելու ձևը մեզ կատարելապէս ծանօթ չէ։ Այսպիսի դէպքերում հեշտութեամբ կարող ենք ծուղակն ընկնել, և մեր կրթութեամբ փայլել ցանկանալով՝ երևան կըհանենք միայն մեր տգիտութիւնը։

Այդ կերպ աւելի յաճախ վարւում են կանայք, որովհետև նրանց կրթութեան որպէս հիմունք՝ չէ դրւած դասական լեզուների ուսումնասիրութեան գործը այնպէս, ինչպէս մարդկանց մօտ։ Եթէ մենք խօսակցութեան մէջ գործ ենք ածում մի օտարազգի բառ, կամ մի ամբողջ իմաստ՝ ասել ուրեմն նրա նշանակութիւնը պէտք է լաւ ըմբռնած լինենք։ Բայց նոյն իսկ օտար լեզուներին տիրապետած ժամանակ էլ՝ եթէ խօսում ենք մեր մայրենի լեզուով, պէտք է պահպանենք նրա մաքրութիւնը։ Միանգամայն սխալ կարծիք է թէ օտարազգի ֆրազների կտորներով համեմած խօսակցութիւնը, իբր թէ, ծառայում է մեր բարեկրթութեան և կատարելութեան որպէս յատկանիշ։

Երբ մարդս, իր մանուկ հասակից ընտելացած լինելով օտարազգի մի քանի լեզուներով խօսելուն՝ իր անուշադրութիւնից մի լեզուի բառերը միւս լեզուի բառերի հետ է խառնում,—այդ դեռ ներելի է. բայց եթէ հայը, որ բացի իր մայրենի լեզուից չէ իմանում ուրիշ լեզուներ, օտարազգի որևէ խօսքեր է արտասանում,—նա իր դիմացինից դուրս է կոչում ակամայ ժպիտ։

Ռամկական դռնհիկ նախադասութիւններ, ափեզ-ցափեզ առածներ, մի խօսքով՝ ամենը, ինչ որ հեռանում է մաքուր, բարեկըրթ խօսուածքի շրջանակից, անտեղի է կրթուած անձերի խօսակցութեանց մէջ, իսկ նա մանաւանդ՝ սալոններում։ Լորդ Չեստերֆիլդը իր որդուն գրած նամակների մէջ այդ տեսակ վտանգաւոր զարդարանքները անարդ մարդկանց պերճախօսութեան ծաղիկներ է անւանում։ Նոյնպէս աւելորդ են և չափազանցացրած ձեւականութիւնները ու ամենասովորական առարկաների մասին խօսալիս՝ այսպիսի բառեր գործ-ածելը.—աստւածային, շքեղազարդ, կամ թէ՝ սարսափելի, հրէշաւոր, այլանդակ,—այս ամենը խօսակցութեանն անպէտք և ծաղրալի գոռոզութիւն են տալիս։ Բայց և չենք չանձնարարում ընկնել հակադիր ծայրայեղութեան մէջ, այսինքն՝ խօսակցութիւնը համեմել մի մի այնպիսի բառերով, որոնք յարմար են գործ ածելու ախոռներում, արշաւահանդէսներին և ամուրիների շրջանի մէջ միայն։ Մանաւանդ անախորժ է մանկամարդ աղջիկների և տիկինների բերանից ծայրայեղ խօսքեր լսելը։ Նրանք երբեմն իրանց թոյլ են տալիս այդպիսի ծայրայեղութիւններ՝ ինքնուրոյն երևալու համար, սակայն սխալւում են իրանց հաշիւներում, և ձեռք են բերում համբաւ միայն անսանձ և վատ դաստիարակւած անձնաւորութիւնների։ Ձշմարիտ լուսաւորւած մարդը չի դիմիլ կոպիտ էֆֆէկտների, և իր խօսակցութեամբ տպաւորութիւն թողնել ցանկանալով՝ նա չի աշխատիլ ընկնելու ոչ ձայնի ու շարժւածքի արհեստականութեան, ոչ իմաստակութեան և ոչ ծաղրելի գոռոզութեան մէջ և թէ արտայայտութիւններում կըլինի զգոյշ, կ'աշխատի բացատրել ստոյգ կերպով, որպէս զի իր խօսակիցները չըսխալւեն իր գրոյցի նշանակութեանց մէջ, և չեն վերածիլ նրանց միանգամայն անհամապատասխանող մտքերի՝ սխալ բացատրութիւններ տալով։

Նոյնպէս տգեղ է, երբ խօսակցութեան ժամանակ յաճախ գործ ենք ածում մեզ յատուկ նախադասութիւններ. օրինակ—օ՜, երեակայեցէք ձեզ. արդեօք գիտէ՞ք. այնպէս չէ՞ եւ այսպէս. ահա այս պատճառով. և այլն և այլն։ Այսպիսի արտայայտութիւններից մէկն ու մէկին յաճախակի դիմելու սովորոյթը մեզանում արմատանում է մինչ այն աստիճան, որ մենք կրկնում ենք նրանց՝ առանց այդ բանը զգալու և այնուհետև դժւար է լինում ձեռք վերցնել այդ միանգամայն անպէտք՝ միջանկեալ խօսքերից։ Ինքնըստինքեան հասկանալի է, որ կրթւած, լուսաւորւած մարդկանց, մանաւանդ կանանց համար, անպատեհութիւն է խօսակցութեան ժամանակ հայհոյիչ խօսքեր գործածելը, այն է՝ սատանան տանի, գրողը տանի և ուրիշ բառեր։ Ամեն

մի բարեկիրթ անձն կրնար սոսկովանի, որ դա անախորժ է· բայց և այնպէս, այդ խօսքերին դիմելու վատ սովորութիւը շատերն ունին։ Գեղեցիկ սեռը աւելի չահախնդ է այդ բանին ի չարը դործ դնում իր սրտաշարժ, վսեմ և ոգեւորուած բացականչութիւններով.—ո՜հ, Աստո՛ծ իմ, Յիսուս Քրիստոս, ո՛վ ամենակալ Փրկիչ և այսպէս շարունակ։

Տոկուն և աշխարհային կրթութեան տէր մարդիկ ամեն մի քայլում չեն դիմիլ սոյնանման արտայայտութիւնների.—Ազնիւ իսօսք. Աստուած վկայ. Քրիստոսի առէքկերէքը գիտենայ, հաւորդը վկայ. պատուոյս ի՛մ երդում և այլն։ Այն մարդուն, որ ամենայն ճշտութեամբ հետևում է ճըշմարտասիրութեան դաղափարին, նրան հաւատում են առանց որևէ երդումների հաստատման էլ, և քաղաքավարութիւնը պահանջում է, որ մենք՝ հասարակութեան մէջ մէկն ու մէկի խօսակցութիւնը լսած ժամանակ՝ դէպի նրա խօսքերը տածած մեր բացայայտ անվրդահութիւնն ու երկմտութիւնը երևան չըհանենք. հետևապէս՝ մեր երդումները և րոպէ առ րոպէ մեր ազնուութեան, մեր պատի վրայ չարձակում գործելը անտեղի է նամանաւանդ սալոնական խօսակցութեանց ժամանակ։

Այժմ խիստ տարածուած է սեպհական հեղինակութիւն կազմող բառեր գործածելու մոլութիւնը թէ մամուլի մէջ, թէ առօրեայ խօսակցութեանց և թէ զանազան դասախօսութիւնների ընթերցման ժամանակ։ Մեր ժամանակակիցները աւելի չջող և բնական եղանակով արտայայտելու ձգտումով երբեմն շատ հեռու են դիտում, օրինակ՝ որպէս զի ցոյց տայ թէ ինչպիսի դժւարութեամբ իր դիմացինին մի բան հասկացնել կարողացաւ՝ նա ասում է.—*Այդ բանը դլուխդ մտցնելու համար ուղեղս չարաչար կերպով ջախջախման ենթարկեցի.—հիւանդ մոռացկոտութիւն* (երևի առողջ մոռացկոտութիւն էլ կայ).—*անյագ թախիծ. ահագին ինդիր. քուն բերող խաւար.* և ուրիշ այսպիսի բաներ։ Սոյնանման արտայայտութիւնները ծառայում են ոչ թէ մեր ինքնուրոյնութեանը որպէս չանդիմանութիւն, այլ ընդհակառակը, նրանք ապացոյց են մեր մտքի դժգունութեան, աւելի խորը թափանցելու պակասութեան, մի ինչ որ տանջանքոտութեան, և չեն խօսում չօգուտ այն անձի, որ չաճախակի նրանց դիմումներ է անում։

Ընթերցողը կըհարցնէ. ապա ինչ կերպ հասնել լեզվի մաքրութեանը, առանց վնասելու վայելչագեղութեան և միևնոյն ժամանակ վերջինն էլ ձեռք բերելով։ Պատասխանը.—մարդս ինքն իրան պէտք է հետևի, և խօսելիս՝ իր սովորական եղանակով խօսի, միևնոյն ժամանակ օրինակ առնելով այնպիսի անձերից, որոնք մեզանից բարձր են թէ խելքով, թէ կրթութեամբ. ամենայն ուշադրութեամբ կարդալ ընտիր հեղինակներ, նամանաւանդ այնպիսիներ, որոնք աչքի են ընկնում իրանց տրամախոսական ճարտարութեամբ ու ոճի շքեղութեամբ, և, վերջապէս, լսել սիրուն, թեթև, իրանց սրամտութեամբ փայլող թատրոնական պիէսներ. ձեզ օրինակ յայտնի զարճախօս բարոն Միւնխհաուզէնը, որ չանպատրաստից ոտանաւորներ, կատարելապէս անհաւատալի պատմութիւններ էր շարադրում, հասարակութեանը զարճացնելու համար։

Գ. Բ.

Բարեգործ. ընկ. ընդհ. ժողով

—

Անցեալ կիրակի Հ. Բարեգործ. ընկերութեան արտաքոյ կարգի ընդ. ժողովին եկել էին 70-ի չափ անդամներ։ Պարտութիւն կրած այժմեան մեականների փըրռանիը բերել էր ում կարողացել էր։ Սակայն ընդ. ժողովի նախադահ բժկ. պ. Ե. Նաւասարդեան իրան յատուկ հմտութեամբ ղեկավարելով ժողովը, թոյլ չըտաւ ոտնձգութիւններ և յեղաշրջումներ անել։ Տասնեւվեց հոգի նախկին ընդ. ժողովին անկանոն համարելով՝ ընկանել էին կամենում, բայց չըկարողացան իրանց անիրաւ դաւը տանել և կրկին համոզելով, որ միշտ չի կարելի աւտոմատների քւէներով իրդիրներ վճռել՝ սևեռեռս վերադարձան տուն։

Կատարեալ դժբախտութիւն է, որ այսպիսի պարագաներում, մանաւանդ, Հայը խարդաւանանքներով է պարապում, որա-նրա անձնական կրքերին ծառայում և ազդային հասարակական հաստատութիւնները ծառայեցնում իր ինստինկտներին։

Այսօր, երբ թշւառ Հային ըստիպւանք են Հասցնում հեռու, օտար աշխարհներից թագուհիներ, թագաւորազներ, և մարդասիրաբար օգնութեան ձեռք են կարկառում մեր արիւնակից սոված, սգաւոր Հային, մենք հէնց այդ ժամանակ մեր եղբայրակիցների թըշւառութիւնը մեզ համար միջոց ենք շինում մեր կրքերին յագուրդ տալու, մեր անձնական մանր-մունր հաշիւները միմեանց հետ մաքրելու։

Ուրախալին այն է, որ Հ. Բարեգործ. ընկ. կազմակերպութիւնը այնպէս է, որ այժմեան մեականները անկարող են իրանց դիտաւորութիւններն ու ծրագրները այդտեղ մտցնելու։ Սրանց թեկնածուներն այս անգամ էլ սևացան։

Չատ ըէլիէֆ աչքի է ընկնում առաջադիմականների վարմունքը։ Սրանք ոչ թէ քւէների ետևից են ընկնում, այլ իւրաքանչիւրն անկախ դալիս է ժողով և իր Հայեցողութեամբ վիճում, վճռում իրդիրներ։

ԳԵՂԱՐՒԵՍՏ

թատրոն, երաժշտութիւն

Ապրիլի 30-ին Հ. Բարեգործ. ընկ. օգտին թատերասէրների ներկայացման՝ Ազնւականների թատրոնում՝ եկել էր մեծ բազմութիւն, գլխաւորապէս դաւառացիներ։

Օստրովսկու Արդիւնաւոր պաշտօն կոմեդիան, որ այդ երեկոյ թատերասէրները ներկայացրին դերասան Տէր-Դաւթեանի մասնակցութեամբ, թէև չանցաւ շքեղ, այնու ամենայնիւ չի կարելի անչչջող անւանել։ Ճշմարիտ է, բոլորեքեանք հաւասար չըգիտէին իրանց դերերը, չաճախ շշկըլւում էին, սակայն ընդհանուր տպա-

ւորութիւնը, մանաւանդ ներկայ եղող հանդիսականների տեսակէտից, լաւ էր։ Թատերասէր պ. Ա. Մանդինեանի մասնակցութիւնը այդ ներկայացմանն էլ բաւական expesse էր տալիս և ensemble-ից չոկւում էր այդ սիրուն կոմիկի խաղը։ Պ. Լ. Մանուէլեան, որ Վաղարշապատի հայ բեմի վրայ նշանաւոր դրամատիկ դերասանի հռչակ էր ստացել, այս անգամ էլ չըկարողացաւ մեզ համոզել որ ունի մեծ տաղանդ։ Պ. Ն. Աբրահամեան վատ չէր լինիլ Վիշնեւսկու դերում, եթէ փոխանակ ձեռքերի, լեզուի շեշտումով կարող լինէր արտայայտել միտքը։ *_*-ի տակ թագնւած Աննա Պաւլովնան վատ չէր, ի նկատի ունենալով այդ անձնաւորութեան խիստ համեստութիւնը։ Օր. Ն. Օհանեան աւելի լաւ Կուկուշկինա կըլինէր, եթէ դերը լաւ անգիր արած լինէր։ Օր. Ա. Խլթարեան—Պոլինան կարևոր անդամ կարող է լինել հայ մշտական խմբի համար, եթէ իր վուլգար մի քանի ձևերը թողնէ. grande-dame լինել առ այժմ նա չի կարող, սուբրէտ դերեր աւելի յաջող կարող է կատարել, մանաւանդ որ դժւար տեղն ընկնելիս միշտ կարողանում է շնորհիւ իր քնքուշիկ ձայնի՝ վատ տպաւորութիւն թողնելուց ազատւել։

Օր. Ախաշեան, դարձեալ իր ոչ-հայերէն արտասանութեամբ յօնքը շինելու տեղ՝ աչքն էլ հանեց։

Օստրովսկու Արդիւնաւոր պաշտօն կոմեդիայի մասին էլ կըկամենայինք մի փոքր ընդարձակ խօսել, եթէ այդ պիէսի բովանդակութիւնը համարեա բոլոր ընթերցողներին ծանօթ չըլինէր։

Համոզմունքների տէր, գաղափարական երիտասարդ ծաղով (Լ. Մանուէլեան) տարիների ընթացքում իր բարեսիրտ, դեռ ոչ բոլորովին բարոյապէս փչացած կնոջը չէ կարողանում կրթել, դաստիարակել, և վերջ ի վերջոյ ինքն է նրա ընստիկնտներին ենթարկւում, զոհում իր համոզմունքն ու գաղափարները։ Իզուր է Օստրովսկին պիէսի վերջում հաշտեցնում Պոլինային իր ամուսնու հետ և հէնց այդ պատճառով էլ այդ դրաման կոմեդիա անւանում։ Տարիների ընթացքում լաւ ուղեցոյց ունենալով անգամ՝ Պոլինան յոռի ճանապարհն է ընտրում իր համար փրկարար, և մի թշւառ օրինակը հազիւ թէ կարող լինէր Պոլինային փոխել։

Եւ վերջապէս այդ ծաղովը ինչ տեսակ ինքնաճանաչ, կրթւած մարդ է, որ իր բարի զգացմունների տէր (ըստ պիէսի) Պոլինայի հետ պսակւելով, իսկոյն չէ պարապում նրա կրթութեամբ ու դաստիարակութեամբ, այլ օրն ի բուն աշխատում է միայն ապրուստի համար փող վաստակելով։ Մի՞թէ աւելի ճիշտ չէր լինիլ, եթէ ծաղովը հէնց իր ամուսնութեան առաջին օրից իր կնոջ մտաւոր զարգացման մասին աւելի հոգ տաներ և սովորացներ նրան մի կտոր չոր հացով ապրել, և դրա փոխարէն հոգեկան աւելի սնունդ մատակարարէր նրան։

—

Արքունական թատրոնում ռուս դրամատիկ խմբին աւելացաւ և թիֆլիսցիներին յայտնի տ. Վոլինա։ Անցեալ երեքշաբթի Սմբատովի Շղթաներ դրամայում նա կատարեց Վոլինցեւայի դերը։

Սմբատովի այդ դրաման, չնորհիւ իր բեմականութեան, էֆֆեկտ ունենալուն և դերակատարների համար իրանց տաղանդը երևացնելուն՝ երկար ժամանակ է, որ նոյն իսկ մայրաքաղաքի բեմերի րեպերտուարումը մնում է։ Ազնիւ ամուսնուն, միակ մանուկ դստերը թողնում է Վոլինցեւան և լկտի կրքերին անձնատուր եղած՝ զեղխ կեանք վարում։ Տասներկու ձիգ տարիներ նա շարունակում է այդ կեանքը մինչև որ կշտանում, յոգնում է։ Այժմ միայն նա յիշում է իր հարազատ դուստր Նիւտային (տ. Տիրասպոլսկայա) և այդ պատրւակով նա իր ամուսնական իրաւունքները ձգտում է վերականգնել։ Սակայն Վոլինցեւին (պ. Լիւդվիգով) իբրև պահապան հրեշտակ սիրել է անհուն, արդար սիրով Օլյգա Գուրանինան (տ. Իւրևա), որը իր սիրեցեալի դուստր Նիւտային իբրև հարազատ մայր, գգւել, փայփայել, մեծացրել, սովորացրել է սիրել իր մօրը, և երբ Վոլինցեւային յաջողւում է տեսնել իր դստերը, վերջինս իր անառակ մօր (սակայն այդ նա չէր իմանում, նրա դաստիարակչուհին գաղտնիք էր պահել այդ Նիւտայից) դիրկն է ընկնում և հեռանում իր իսկական անձնուրաց դաստիարակչուհուց։

Ձղթայւած է ամուսնական կապերով Վոլինցեւը իր անառակ կնոջ հետ, որը տասներկու տարի նրա բարի անունը և կարողութիւնը հարստահարում, է, սակայն շղթայւած է և այս անառակ կինը մի ինչ որ աւանտիւրիստի հետ (պ. Փորկատի), որ երկար տարիներ իր ճանկերում նրան պահելով՝ մի քանի հարիւր հազար րուբլի է ուզում իր մարմինը ծախող կնոջից, որպէսզի իր ճանկերից ազատէ։ Ձղթայւած է և Օլյգա Գարանինան Վոլինցեւի հետ, որին տւել է և իր սէրը, իր պատիւը, ապագան և բացի այդ, իր սիրեցեալի դստեր հետ այնպիսի սիրով է շղթայւել, որ շատ քիչ հարազատ մայրերի մէջ կըգտնենք։

Սմբատով իր հերոսների շղթաները փշրում է Վոլինցեւայի թոյն խմելովն ու կեանքին վերջ տալով։ Խոր, հոգեբանական մի պիէս չէ սա։ Նեարդներ դրգռող, ջղայիններին լացացնող մի մելոդրամ է։

Այս ներկայացմանը տ. Իւրեւան անձնազոհ, սիրող կնոջ դերը կատարեց դեղեցիկ։ Տ. Տիրասպոլսկայա լաւ Նիւտա էր։ Տ. Վոլինա ստացաւ մի շատ շքեղ զամբիւղ սքանչելի թարմ ծաղիկներով։

—

Օր. Պապայեանի կոնցերտին անցեալ կիւրակի Թիֆ. ժողովարանում քիչ ունկնդիրներ էին եկել։ Ձնորհալի երգչուհուն թէև փոքրաթիւ հասարակութիւնը շատ ծափահարեց և նա էլ պրոգրամից դուրս մի քանի արիաներ երգեց զանազան օպերաներից, այնու ամենայնիւ նրան սուլեցին, թէ ի՞նչու, —արդեօք նրա կամակորութեան, թէ վատ երգելուն համար —այդ չըգիտենք։

—

Ձուրտում պ. Ն. Խանդամիրեանի թատրոնում առաջիկայ ամառը տրւելու են մի շարք ներկայացումներ։ Օր. Վարդուհի, պ. Տէր-Պաւթեան ի միջի այլոց մտադիր են մի քանի ներկայացումներ տալ այնտեղ յուլիս ամսին։ Բացի այդ՝ մեր դերասաններից մէկը կազմում է մի խումբ շաբաթական երկու ներկայացում տալու։ Աբոնիմէնտ պէտք է բանան կէս գնով։

ՅՈՅՆ–ՏԱՃԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—

Յոյները Փարսալուի, Վէլէստինոյի մօտ քաջութեամբ ընդդիմադրելուց յետոյ, ստիպւած եղան յետ քաշւել տաճիկների կրկնապատիկ բազմութեան առաջ։ Այս ճակատամարտերում առանձնապէս փայլեցին Թագաժառանգ

Կոստանդինը և գնդապետ Սմոլինէյը իրանց դնդերով։ Յոյները կարող եղան քշել տաճիկներին դէպի Կարիսա, սակայն մինչև վերջը անկարող եղան յաղթանակը սլահել իրանց փոքրիկ ոյժով։ Նրանք յետ քաշուեցին և տաճիկները յառաջացան դէպի Վոլօ։ Այս քաղաքը այժմ պաշտպանւում է անգլիական և ֆրանսիական ծովային զինուորներով, որ գտնելով ծովի ափին՝ առան իրանց պաշտպանութեան ներքոյ։ Յետ քաշուեց և Արտայի մօտ գտնւած յունական զօրքը, սաստիկ ընդդիմադրութիւն ցոյց տալուց յետոյ տաճիկ բազմաթիւ զօրքերին։

Այսպիսով Յունաստանը Եւրոպայի աչքում չաղճւած է. արդէն հաշտութիւն կայացնելու ձայներ են լսւում։ Յոյները սաստիկ զրգռւած են թագաւորական տան անդամների դէմ և պատերազմի անյաջողութիւնը նրանց վրայ են ձգում։ Նոյն իսկ փողոցային հայհոյանքների առարկայ է դառնում թագաժառանգի կինը, որ Վիլհելմ կայսրի հարազատ քոյրն է։ Տաճկամոլ Վիլհելմը ուրախացած տաճկի յաջողութիւններից, սրտագին շնորհաւորութիւն յղեց սուլթանին տաճիկ բանակի յաջողութիւնների և նրա գերբնտիր վարմունքի համար։

Վիլհելմը շատ գոհ է, որ գերմանացի օֆիցերները, որոնք ղեկավարում էին տաճկաց վաշտերին, մեծ յաջողութեամբ չալչալեցին փոքրաթիւ յոյներին։ Զօրքերի հրամանատար Խդհէմ-փաշան գերմանացի է. գերմանացի է և Գրումբկով-փաշան, որի պլանով են զօրքերը շարժւել։

Արդէն Յունաստանը դիմել է պետութիւններին՝ միջնորդել հաշտութիւն կապելու Տաճկաստանի հետ։ Նրանք ընդունել են և այդ մասին բանակցութիւնները շարունակւում են։

Աղէտ Պարիզում

Ամբողջ Քրանսիան ապի մէջ է, Պարիզում բարեգործական նպատակով կազմած բազարի այրելի պատճառով, որին զոհ գնացին շատ նշանաւոր անձինք։ Ամեն տարի գարնանը Պարիզի արիստոկրատիան բարեգործական բազար է կազմում, որին մասնակցում են Քրանսիական վայրերն պատկարգերը։ Բազարի շէնքը շինւած է եղել փայտից Jean Goujon փողոցի վրայ։ Հրդեհը յայտնւել է մինչեւ այժմ անյայտ պատճառից. զոհերի թիւը հասնում է 150 հոգու։ Այրւողների բազմի են Ալատոնեան դքսուհին—Աւստրիայի կայսրուհու եւ Նէապոլիտանեան թագուհու քոյրը եւ շատ նշանաւոր անձինք, որոնց մէջ դքսուհիներ, կոմսուհիներ, բարոնուհիներ, գեներալներ, նկարիչներ եւ այլն։ Բացի այրւածներից, շատերն էլ վէրքեր են ստացել։ Շատերի դիակները անհնար էր ճանաչել, այնքան այլանդակւած էին. այսպէս՝ Ալատոնեան դքսուհին ճանաչւել է միայն նրա ատամներից։ Շատ նազելի կանանց լոկ կմախքներն էին մնացել եւ անհնար էր լինում որոշել այրւածների որ սեռից լինելը։

Հրդեհը արագութեամբ շրջապատելով բազարի շինութիւնը, նրանք վախից թափւում են իրար վրայ անասելի սիրտ մորմոքող աղաղակներով։ Շատերն են ազատել հրդեհից. զոհերի մեծ մասը կանայք են եղել. շատը իր կնոջը կամ հրոջը եւ կամ աղջկանը ազատելու ժամանակ ինքն էլ այրւել է։ Ադէտի օրը մարմինների այրելուց բարձրացել էր հնութեան։ Երեւակայեցէք զոհերի բարեկամների դրութիւնը, երբ տեսնում էին իրանց աչքերի առաջ բոցերի մէջ այրւում են իրանց սիրելիները, հարազատները...

ԼՈՒՐԵՐ

Լրագիրների ասելով յոյն-տաճկական պատերազմը շատ զօրացրել է տաճիկների անձնապաստանութիւնն ու պատերազմական տրամադրութիւնը։ Ուստի և պետութիւնների մտադրած բէֆորմները մտցնելու Տաճկաստանում՝ շատ կսկածելի է համարւում։ Առանց դրան էլ Տաճկաստանը չէր իրագործում բէֆորմները, ուր մնաց պատերազմից յետոյ, երբ տաճիկը կրկնակի երես է առել և այսուհետև աւելի զօրացած ամուր կըկանգնի իր քարացած քաղաքականութեան վրայ։ Միւս կողմից լսւում է, թէ պետութիւնները պատերազմը վերջանալուց և կրէտէի հարցը վճռելուց յետոյ կըսկսեն բէֆորմների գործը, որի ծրագրի ուր լինելը մինչև այժմ չի իմացւում։

Պետութիւնների Կ. Պոլսի դեսպանները Հայաստանի նկատմամբ առաջադրութիւններ անելուց չեն յոգնում. այս օրերս էլ կրկնեցին իրանց առաջարկութիւնները Սրազի վալի Հասան փաշայի և Երուսաղէմի զինուրական հրամանատարի վերաբերմամբ։ Սրանք Փոքր-Ասիայում տեղի ունեցած կոտորածների հեղինակներն են, սակայն անպատիժ մնացած։ Այդ դեսպանները դիմումն արին, Թոքաթի դատարանի գործողութիւնների (երևի պատիժների) յապաղման առիթով։ Սակայն արտաքին գործերի մինիստր Թէւֆիկ-փաշան խնդրել է այդ խնդիրները յետաձգւին մինչև պատերազմի վերջանալը։

Ինչպէս Վեհափառ Հայրապետի ուղևորութիւնը, այնպէս և ս. մյուռոնի օրհնութիւնը յետաձգւած են։ Մյուռոնօրհնութիւնը կրկատարւի եկող աշնանը։

Կովկասի Հայոց հարեգործական ընկերութիւնը Պանիայից նորից ստացել է 10 հազար րուբլի Հայաստանից փախած մեր տաճկահայ եղբայրների օգտին։ Այս գումարը ժողովւած է Պանիայի ողորմած թագուհու խնամատարութեան ներքոյ գտնւած յանձնաժողովի ձեռքով։ Փոքրիկ պանիական թագաւորութիւնը չըկարողանալով ուրիշ կերպ օգնել բախտազուրկ հայերին, նպաստներ է ժողովում. մինչև այժմ նա ուղարկել է մօտաւորապէս 15 հազար րուբլի։

Անգլիական պարլամէնտում հարց ու պատասխաններ են տեղի ունենում—ինչ էք կարծում ինչի համար—թէ արդեօք այս ինչ գայմագամը կամ վալին կամ քաղաքապետը պաշտօնանկ եղաւ իրանց գործած չարիքների (իմա կոտորածների) համար։ Եւ արտաքին գործերի մինիստրի օգնականը լրջութեամբ պատասխանում է թէ՝ «Դուռը հրամայել է մանրամասն քննութիւն անելու և խստիւ պատժելու չանցագործներին։ Եւ թէ կառավարութեան (տաճկի) խօսքին նայելով (պատելի մինիստրը չըգիտենք հաւատում է տաճկի խօսքին), հրամանագրել է այդ բանի վերաբերմամբ»... և այլն և այլն։

Սուլթանը ուզում է յոյն-տաճկական պատերազմի ընթացքում հայերին շահած լինել, որպէսզի այնուհետև իր անելիքն անի։ Ահա թէ ինչ է հաղորդում Daily News-ը. «Մամուլի ընկերակցութիւնը իմանում է, որ սուլթանը հրաւիրել է Անգլօ-Հայկական կոմիտէին մի պատգամաւորութիւն ուղարկել Կ. Պոլիս խորհրդակցելու Անատոլիայի համար առաջարկւած բէֆորմների նկատմամբ։ Պատգամաւորութիւնը Կ. Պոլսում իր մնալու

ժամանակամիջոցում հիւր կլինի սուլթանին։ Այնպէս է հասկացուում, թէ սուլթանի և հայերի մէջ մերձեցում առաջ բերելու՝ մի ընդհանուր գծի վրայ՝ արդէն համաձայնութիւն է կայացել»։

—

Կովկասի կառավարչապետի օդնական գեն.-լ. Ա. Ա. Փրեզէ ուղևորուեց պաշտօնական գործերով հիւսիսային Կովկաս։

—

Կիրակի, ապրիլի 27-ին, կայացաւ Հայոց հարեգ. ընկերութեան ընդհանուր ժողովը։ Ժողովում կարդացած հաշուից երևաց, որ ընկերութիւնը անցեալ տարի ունեցել է 60 մշտական և 187 իսկական անդամներ։ Մինչև յունուարի 1-ը 1897 թւի՝ մայր գումար ենթագրուում էր 15,498 ր. 78 կոպ.։ Ընկերութիւնը ունեցել է տարւայ ընթացքում եկամուտ 5,979 ր. 23 կ.— ծախք 5,738 ր. 66 կոպէկ։ Ընկերութեան միջոցներով է պահւում և կարուձևի ուսումնարանը, որի բոլոր ծախքերը դուրս հկած՝ զուտ արդիւնք էլ է ունեցել։

—

Նորերս Թիֆլիսում վախճանուած յայտնի առևտրական Ովհաննէս Խուպդեանցը մի շատ նշանաւոր կտակ է թողել. Նա իր ամբողջ կարողութիւնը նւիրել է ազգային նպատակների։ Կովկասի Հայոց հարեգ. ընկերութեանն է նւիրել մօտ 150 հազարի արժողութեամբ կարողութիւնը, որի գործադրութիւնը թողնուած է ընկերութեան բարեհայեցողութեան, բացի դրանից գումարներ է յատկացրել նաև Մողնու ս. Գէորգ եկեղեցուն, Ներսիսեան դպրոցին (1500 ր.) և կոյրերի հոգաբարձութեան (1500 ր.)։

—

Մեզ խնդրում են յայտնել, որ մայիսի 15-ից Մուշտայիդի այգում կըբացւի Իուսական թուչնապահների ընկերութեան Կովկասի ճիւղի տնային թռչունների ցուցահանդէսը։

Նամակ խմբագրին

Մեծ. պ. խմբագիր.

Տարազի № 14-ում տպւած է, թէ պ. Ս. Պալանքար եւ ընկ. դեռ Գ. Աւծրունու կենդանութեան ժամանակ (92 թ. դեկտ.) ժողովներ էին անում Գր. Աւծրունու եւ նրա Մշակը տապալելու, սակայն Աւծրունին մեռաւ եւ դաւաճաններն ու դաւադրութիւնները սարսղները այսօր տէր են դարձել Մշակին։ Ուրվեհետե ես էլ եմ եղել այդ ժողովներում, իսկ այդ ժողովները իրենց ճշմարտ գաղտնիքներ բացում են այսօր, իմ պարտքս եմ համարում մի քանի խօսք ասել։ Այդ ժողովներում ոչ դաւաճաններ կային եւ ոչ դաւադրութիւն, այլ յայտնի տրտունջը Մշակի եւ Գր. Աւծրունու դէմ։ Այդ տրտունջը ունէր իր հիմունքները, որոնք շատ յուրջ էին այն ժամանակ։ Այդ ժողովում խօսողները ապացուցանում էին, որ Աւծրունին վաղուց ապաւել է, իրան շրջապատել է գնադանիով, դարձել է մի անճաշեալի բռնակալ կուսակցութեան գլխին, իսկ Մշակը մի անպէտ բեր, որ ոչինչ չի տալիս, խաբում է հրհատարդութեանը եւ այլն։ Այդ պատճառով կարեւոր էին գտնում Տարազը յանացնել, դարձնել յառաջադիմական կուսակցութեան օրգան եւ կանչել Գ. Աւծրունու եւ Մշակի դէմ։ Մինչեւ անգամ Գ. Աւծրունին, ինչպէս ասում են, հիւանդութեան ժամանակ տեղեկութիւն ունէր այս բոլորի մասին, որ, ասում եմ, գաղտնիք չէր, եւ գաղտնիք դարձաւ միայն այն պատճառով, որ Աւծրունին մեռաւ եւ նրանից այդ օրերում։ Կրկնում եմ, այնտեղ ոչ դաւաճաններ կային ու ոչ դաւադրութիւն, երէ այս բառերը գործ ի գ ածել իրանց իմաստով. այն ժողովները եւ դժգոհութիւնները, մանաւանդ այն ժամանակ, շատ հասկանալի էին, բայց նրանից չնայ պատահածներն էին շատ տխուր եւ զարմանալի։

Յարգանքով՝

Յովհաննէս Թումանեանց.

—

Ընդդիմախօսութիւն

ԻՄ ՀԱՋԻՒԸ ՀՐԱՏ. ԸՆԿ. ՀԵՏ

Շատերը տեսած կլինին, թէ ինչպէս են վիճում ռամիկները։ Վիճում են օրինակ իրանց քեօխւի կառավարութեան մասին. մէկն ասում է լաւ կառավարում, միւսն ասում է՝ վատ։ Վէճը տաքանում է, և յանկարծ տեսնում ես մէկը միւսի դէմ դոռաց. «Տօ, դու ես քեօխւի վրայ խօսում. դու էն չես, որ Մադոնց Ղուկասին 20 մանէթ ես պարտ». և եթէ մի քիչ էլ ամօթից հեռու մարդ է, մի սուտ էլ աւելացնում է, թէ «պարտ ես ու ատկազ ես անում»։

Ի հարկէ, քօխւի հարցում այս պարտքն իսկի գործ չունի, բայց նա չիշում է և մի սուտ էլ աւելացնում, թէ՝ ատկազ ես անում։ Այս խուժանի լոգիկան և չատկութիւնն է։

Այժմ գիւղ եկէք Թիֆլիզի նման մի քաղաք, և միևնոյն երևոյթը ցոյց տալու համար ես ձեզ տանեմ ոչ թէ Ճէյթան-բազար, այլ Մշակի խմբագրատունը։

Ես Հրատարակչական ընկերութեանը փող եմ պարտ։ Դրա մի մասը վճարել եմ, մնացածի համար ստորագրութիւն եմ տւել (93 թ. դեկտ.). ստորագրութիւն տալուց չետոյ էլ կրկին վճարել եմ (94 թ. դեկտ. տալօն № 87), սրանից չետոյ էլ անցեալ տարի Ընկ. վարչութիւնից պատւէր եմ ընդունել թարգմանութիւն անելու (տես տեղեկագիր 1896 թ. երես 32)։ Այս բոլորովին չոկ և մասնաւոր մի գործ է։

Այժմ, այս տարւայ մարտի 22-ին կայանում է Հրատ. ընկ. ընդհանուր ժողովը։ Ես ժողովում բողոքում եմ տեղեկագրի ինչ-ինչ կէտերի դէմ, թէ խմբ. մասնաժողովը չափազանց շատ թարգմանութեան պատւէրներ է տրւել, այդպիսով մտել է իր չայջորդ մասնաժողովների գործունէութեան շրջանը, և սրա նման բաներ, որ ոչ մի կապ չունին իմ պարտքի հետ։ Այդ ժողովում չանկարծ դրին ու քննեցին պ. Ձիրվանզադէի գործը։ Ես բողոքեցի, թէ չի կարելի այդ ձևով դատաստան կտրել և մինչև անգամ այդ վարմունքը հրապարակաւ անւանեցի խուժանական (տես Տարազ № № 12 և 14)։ Սակայն այս էլ ոչ մի առնչութիւն չունի իմ պարտքի հետ և ընթերցողը պարզ տեսնում է, թէ ընչի մէջն է կայանում իմ դժգոհութիւնը։

Այս բոլորից չետոյ Մշակի խմբագրութիւնը հանդիսանում է Հրատ. ընկերութեան պաշտպան և հովանաւոր և թերթի № 42-ում տպում է «ովքեր են դժգոհները... Յ. Թումանեան... Թումանեան ահա չորս տարի է ընկերութեանը մօտ 60 ր. է պարտ» և մի սուտ էլ աւելացնում է «և չէ տալի»։ Դէհ, ասացէք խնդրեմ, մի՞թէ խուժանական չի այս էլ, և մի՞թէ մի որևէ բանով այս խմբագրութիւնը տարբերւում է այն գռեհկից, որ օրինակ բերի խօսքիս սկզբում։

Բայց ես այն չեմ հարցնում, թէ ինչ տեսակ վարմունք ու երևոյթ է սա, ես այն եմ հարցնում, թէ ընթերցողն ինչ է կարծում, ես ձեմ դիմեմ, ձեմից բացատրութիւն ու բանականութիւն պահանջեմ, երբ իմ պարտքը երևում է լրագրում և զրպարտութիւնն էլ հետը։ Այո, կարող էի դիմել և՛ Մշակի խմբագրութեանը, և՛ դատարանի, և՛ միչնորդ դատարանի, և՛ մամուլին և՛ հասարակութեանը,—բայց ինչ էք կարծում, կարող էի իմ պարտքատէրին էլ դիմել, բան հարցնել, թէ ոչ։ Ձրգիտեմ ընթերցողն ինչպէս է կարծում, բայց ես մտածել եմ, թէ առաջ դիմեմ իմ պարտքատէրին, մի հարցնեմ, թէ այդ ինչպէս է եղել, որ

իմ պարտքը, այն պարտքը, որ իսկի քո տարեկան հաշիւներում (տեղեկագիրներում) էլ չի դուրս գալիս, այն ստորագրութիւնը, որ տւել եմ քեզ և քո գրպանումն է (գանձարանում), այսօր դուրս է եկել հրապարակ. և վերջապէս ինձ զրպարտել են, թէ ես չեմ տալիս, այս մասին դու ինչ կասես։ Այսպէս մտածելով Ընկ. վարչութեանը ապրիլի 10-ին գրում եմ հետեւեալ նամակը։

„Մշակ լրագրի այսօրւայ համարում տպւած է, թէ ես ընկերութեանը մօտ 60 ր. եմ պարտ և չեմ տալիս։ Որովհետև այս լուրը արատաւորում է իմ պատիւը, ուստի խնդրում եմ յարգելի վարչութեանդ ինձ յայտնել, թէ ինչո՞ւ և ինչպէս է եղել, որ այն պարտքը, որ ես պարտ եմ ընկերութեանը, այսօր դուրս է եկել հրապարակ այն թերթում, որի խմբագիրը վարչութեան պ. նախագահն է և այն էլ այսպիսի զրպարտութեամբ հանդերձ, թէ ես չեմ տալիս։ Ես կարծում եմ վարչութիւնը այդ կարծիքին լինել չի կարող, թէ ես խոյս եմ տալիս իմ պարտքից, քանի որ այդ պարտքի մի մասը վճարել եմ ես, մնացածի համար ստորագրութիւն եմ տւել *), իսկ անցեալ տարւանից վարչութեան թղթով պատւէր եմ ընդունել թարգմանելու Բէլինսկու գրւածքը Լերմոնտովի մասին, և այն ի հաշիւ չիշեալ պարտքի, ինչպէս խոսեցել եմ յատկապէս վարչութեան պ. նախագահի հետ։ Այս մասին խնդրում եմ վարչութեան կարծիքը“։

Վարչութիւնը ինձ պատասխանում է.

Ձեր առաջարկած հարցերը չեն վերաբերում վարչութեան, այլ Մշակի խմբագրութեանը, որին եւ կարող էք դիմել։

Կարճ և ազդու։ Բայց հասկացողի համար շատ երկար է այս կարճ պատասխանի միտքը և սովոր ականջը կրճանաչի այս ձայնը, որ պատասխանում է Տրատ. ընկերութեան անունով։ Սակայն մի կողմ թողնելով յետին միտքը, հէնց արտաքուստ նայելով դուք տեսնում էք թէ ինչ տեսակ պատասխան է սա։ Եւ ահա ես վարչութեան հետևեալ նիստին ներկայացնում եմ դրա պատասխանը։

Վարչութիւնդ իր № 150 գրութեան մէջ ինձ տւած պատասխանով ակնյայտնի դաշնակից է հանդիսանում Մշակ լրագրին։ Նա ոչ միայն իրան պատասխանատու չի համարում, երբ իմ մուքհակը իր գանձարանից դուրս է եկել հրապարակ, այլև չի կամենում պատասխանել գոնէ իմ այն հարցին. թէ ես խոյս եմ տւել իմ պարտքից թէ չէ։ Նա այսպիսով ինձ զրկում է իր միջոցով ճշմարտութիւնից օգտւելու և զրպարտութիւնը հերքելու հնարաւորութիւնից, համաձայնում է կատարւած իրողութեան հետ և բացարձակ խրախուսում է մի տմարդի վարմունք, ուր բոլորովին ուրիշ առարկայի և վեճի ժամանակ՝ անտեղի և ապօրինի կերպով լրագրում իմ երեսովն են տալիս այն պարտքը, որ ես պարտ եմ Ընկերութեանը, և որը մինչև անգամ նրա տեղեկագիրներում էլ չի դուրս եկել։ Այդ բաւական չի, դրա վրայ աւելանում է զրպարտութիւնը, թէ ես չեմ տալիս իմ պարտքը։ Ես դիմում եմ վարչութեանը, խնդրում եմ նրա խօսքն այս մասին, իսկ նա ինձ ուղարկում է... Մշակի խմբագրատունը։

Այնուհետև ինձ համար մնում էր ցաւելով որոշել և կտրել իմ յարաբերութիւնը Հայոց Հրատարակչական ընկերութեան հետ, որ այդպէս է ճանաչում իր հետ գործ ունեցողի իրաւունքը և այդքան անվոյթ է գտնում դէպի գրողի դառն ու պատիւը, որ յայտնի կոխկրտուած են նոյն իսկ ընկերութեան անդամները, Ընկերութեան գանձարանի թղթերը հրապարակ հանելով, խեղաթիւրելով և զրպարտելով։

Ահա նամակիս հետ ներկայացնում եմ իմ պարտքի մնացածը՝ 53 ր. 52 կոպէկ և սրանով վերջանում են իմ հաշիւները Հրատ. ընկերութեան հետ։ Վերադարձնում եմ նոյնպէս վարչութեանդ № 900 թուղթը, որ գրել է անցեալ տարի և որով ինձ առաջարկել է թարգմանել Բէլինսկու գրւածքը Լերմոնտովի մասին։ Ես միայն զգացմունքներով կարող եմ կապւած լինել Ընկերութեան հետ և ոչ թէ թարգմանութեան պատէրներով, իսկ երբ զգացմունքները վերացած են մէջտեղից, մեր մէջ չի կարող լինել որևէ յարաբերութիւն։

Յովհաննէս Թումանեանց

*) Ցետոյ օրդերից երևաց, որ ստորագրութիւն տալուց յետոյ էլ եմ վճարել։

խառն լուրեր

Ռուսական դեսպանութեան առաջին թարգման Մակսիմով մայիսի 1-ին գնաց սուլթանի պալատը, որպէսզի ռուսաց կառավարութեան կողմից շընորհակալութիւն յայտնէ նրան տաճիկ զօրքերի յոյն գերիների և նաւաճած երկրների վերաբերութեամբ նրանց մարդասիրական վարմունքի համար։

—Գնդապետ Վասսոսը 40 օֆիցէրով և 400 զինուորով Կրէտէից մեկնեց Յունաստան։ Ասում են յունական կառավարութիւնը վճռել է Կրէտէն մաքրել յունական զօրքերից։ Նովապետները յայտնեցին ապստամբներին թէ Կրէտէին կըտրի ինքնավարութիւն և նահանգապետի ընտրութիւնը կառաջարկի ազգային ժողովի հաւանութեան։ Ապստամբները յայտնեցին, որ իրանք էլի մնում են առաջւայ ցանկութեան—միանալ Յունաստանի հետ կամ մեռնել։

—Temps հաղորդում է, որ յոյն անկանոն զօրքերի գունդը, բաղկացած 1700 հոգուց, Աթէնքից ուղևորւեց Էպիրոս։ Խուռն ամբոխը ճանապարհ էր ձգում նրան։ Գնդի գլխաւորն է մի հրաշագեղ մատաղ կին, որ գնում էր ամենից առաջ և բռնած ուներ գլխի վրայ իր հայրենիքի դրօշակը։

—Գարիբալդիի որդուն չըյաջողւեց միութիւն հաստատել իտալական կամաւորների մէջ։ Մինչև անդամ գարիբալդիականների մի մասը նրանից հեռացաւ և առանձին գունդ կազմեց։ Լսւում է, թէ նա վերադառնում է Յունաստանից Իտալիա։

—Ինչպէս երևում է, յայտնի տաճկամոլ Ահմէտ Բարտլէտը Աթէնքումն է եղել, ուր նրան ձերբակալել են յոյները։ Միջնորդւում է նրան չանձնելու բրիտանական կառավարութեան։

—Կ. Պոլսի պատերազմական խորհուրդը քննելով այն պայմանները, որոնցով կարելի է հաշտութիւն կնքել, առաջադրեց սուլթանին պատերազմական տուգանքի փոխարէն պահանջել Յունաստանից նրա նաւատորմիղը։

այլ եւ այլք

Գերմանիայի կայսր Վիլհելմ սուլթանին շնորհաւորել է քաջ զօրք ունենալու համար։

Այժմեան Մշակ լրագիրը գովել է այժմեան Кавказъ-ի խմբագիր պ. Վելիչկոյին և ուրախութիւն յայտնել Кавказъ լրագիրը պ. Միւլիտինից նրա՝ Վելիչկոյի ձեռքն անցնելու համար։

Այժմեան Кавказъ-ը, Վելիչկոյի Кавказъ-ը ապրիլի 30-ին այժմեան Մշակին անուանեց միակ լուրջ եւ վայելուչ լրագիրը Թիֆլիսում։ Կոմենտարիաների պէտք չկան։

—

Վիէննայի Carl Theatre-ի յայտնի դերասանուհիներից մէկը պատահմամբ տեսնելով Վիէննայի մի ընտանիքի մէջ Տարազը, այնքան է հաւանել, որ խնդրել է տանտիրոջից մի քանի №№ իր մօտ պահելու համար, և բացի այդ՝ նա Տարազում տպագրւած Պարիզի մօդաներից մէկի ձևով իր համար հագուստ է պատւիրել։ Յարգելի դերասանուհին կարծիք է յայտնել, որ Տարազը Վիէննայում լոյս տեսնող պատկերազարդ շաբաթաթերթերից շատ շքեղ է հրատարակւում։ Այդ տեսակ համակրական նամակները առաջինը չէ, որ մենք ստանում ենք Եւրոպայից։

—

Բելինսկու մտերից

—

Ընկայ արդիւնք՝ առանց մրցման, վարձատրութիւն՝ առանց գործունէութեան։

—

Հրաժարիր քեզանից, խեղդիր քո մէջ եսականութիւնը, կոխտիր քո շահասէր եսը, ապրիր ուրիշների երջանկութեան համար, զոհիր բոլորը յօգուտ մարդկութեան և մերձաւորի ու հայրենիքի բարօրութեան համար, սիրիր ճշմարիտն ու բարին՝ առանց շահի, հէնց ճշմարտի ու բարւոյ համար, տանջանքի ծանր խաչով միացիր Աստծոյ հետ, անմահացիր։

—

Ո՛չ, կրկին անգամ. յաւիտենականութիւնը ցնորք չէ, ցնորք չէ և կեանքը, որ մի քայլ է դէպի նա. նա ունի շատ վատ, բայց աւելի ևս շատ գեղեցիկ կողմեր։

—

Զգացմունքը էգիտակցող միտք է, իսկ միտքը՝ գիտակցող զգացմունք։

—

Մարդ պէտք է անպատճառ արտայայտէ իր էութեան մարդկային գէթ որ և է մի կողմը, եթէ ոչ բոլորը։

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Պոստով. Վ. Ս. Ձեր պահանջած №№-ը կրկին ուղարկեցինք, սակայն մեր նամակն էլ յանձնեցինք այստեղի պոստի վարչութեանը, որ տեղեկանան Ձէ ի՞նչու դուք չէք ստացել այդ №№-ը։ Կրկնում ենք. երբ մի № չէք ստանում, պէտք է իսկոյն տեղեկացնէք մեզ ձեր քաղաքի պոստի կառավարչի մէջոցով, հակառակ դէպքում Ձէ ձեր եւ Ձէ միւսների այդ տեսակ պահանջներն այսուհետեւ մնալու են մեր կողմից առանց ուշադրութեան։

Հաթում. Վ. Դ. Ձեր խնդիրը կատարեցինք, խնդրում ենք տեղեկանալ եւ մեզ միամտացնէք։

Տիեզերքի մէջ.Ձ—կէ. ձեր ուղարկած 2 ր. համաձայն մեր ցանկութեան տրնօրինեցինք։

Վիէննն. Գ. Գ. Միայն դուք չէք, որ համարում էք մեր արդար բողոքը այժմեան Մշակի դէմ ընդհանուրի դժգոհութեան արտայայտութիւն։ Սպասեցէք դեռ, երբ կըտպագրենք Վարագոյրի ետև փաստօրէն մեղադրանքը եւ դրանց սխրագործութիւնները։

Վիէննն. Հանդ. Ամ. Աստուած տայ մենք սխալած լինենք ձեր վերաբերմամբ։ Բայց կրկնում ենք մեր միշտը եւ յաւակնութիւնը, որ Հանդէսին անվայել ենք գտնում այդ դիրքը։

Ժընևն. Եր. Պ. Ուղարկեցինք №№-ը։

Խմբագիր-հրատարակիչ՝

Տիգրան Նազարեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«Ա Ղ Բ Ի Ւ Ր»

Միամսեայ պատկերազարդ

ՀԱՆԴԷՍ

Տարեկան գինը 3 ր. (աստաւսման 4 ր.)

Հասցէն՝ Тифлисъ.

Редакція Арбюръ.

Թարգմանւում է

Սերաստիան Կնայպի

„МОЕ ЧУДЕСНОЕ ВОДОЛѢЧЕНІЕ“

հեղինակութիւնը։

5—1

Зуболѣчебный Кабинетъ Д-та Кавказскаго Офицерскаго Экзном. общества Ю. А. ФРАНКЪ. Лѣченіе, пломбированіе, извлеченіе и вставленіе искусственныхъ зубовъ. Пріемъ больныхъ отъ 9-хъ час. утра до 7-ми часовъ вечера.

Головинскій пр. д. Сергѣева № 7

10—2

Աղբիւր-Տարազի

զրասենեակում Իտալիայից եւ Ֆրանսիայից ստացել են մեծ բանակութեամբ 200 տեսակից աւելի *օյեօգրաֆիական շատ գեղեցիկ* **ՊԱՏԿԵՐՆԵՐ, հատը հանասպարհածախսով 30 կ. մինչ 3 ր.**

Հայաստանից վռնտած մի հայ

ԼԻԱՑԱՐԱՐՈՒՀԻ

յանձն է առնում ընտանիքներում լուանալ ճերմակեղէն եւ հասարակ ուրուածք,

օրական 40 կոպ. վարձ առնելով։

Հասցէն Տարազի գրասենեակում։

ԱԼԲՈՄ-ԱԼՄԱՆԱԽ

4 գոյնով տպագրուած, 64 թերթիկների վրայ, 101 հետաքրքիր և գեղեցիկ պատկերներ, նկարներ

ԳԻՆԸ 2 ր.

Ադրիւր և Տարազի 96 և 97 թ. բաժանորդների համար 1 ր. 25 կ.

Դիմել՝ Тифлисъ, Арбюръ կամ Таразъ.

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ճենապակու վրայ պատկերը վաճառւում է հատը 10ր.ճանապարհածախսով։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկլիա, Վորոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների։

Դ. Ֆ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Կին-բժիշկ ԹՈՒՆՅԱՆՎԱ ՐՈՒԲԵՆԿՈ—10—11 ժ. կանանց և երեխ. հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուաքթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. երեքշ. հինգշ. և շաբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուաքթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Ֆ. ԳՈՒՐԿՈ—6—7 ժ. սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների հ. ներքին և մորթի հ.

Ա. Ֆ. ԳՈՒՐԿՈ քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խիի, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիում) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Թիֆլիսի Կենդրոնական եւ Կովկասեան զանազան բաղաքների գրասենեակաոցներում ծախւում է

ԱՏՐԳԵՏ

«Արմաս» վէպ բարձր-Հայոց կեանքից. գինն է. . . . . 2 ր.

«Խեւ-Կարապետ» վէպ Հայ-կաթոլիկների կեանքից . . . . . 1 ր.

«Զուլեան» ողբերգ. օպերայի համար թուրք Հայոց կեանքից. . . 1 ր.

«Սարսափ» ողբերգութիւն տաճկ. պատ. կեանքից. . . . . 30 կ.

Дозв. ценз. Тифлисъ, 3 мая 1897 г. Տպարան Յ. Մարտիրոսեանցի. Тип. И. Мартиросіанца Орбел. ул., № 1—2.